



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԵԼՎԵՐՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑՄԱՆ ԳԱՍԱՐԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՄ



Funded by
the European Union



NGO "Centre of Economic Right"

Աջակցություն ֆինանսական գրագիտության բարձրացմանը. բյուջետային ծրագրերի հասարակական մոնիթորինգի իրականացման համառոտ ձեռնարկ ՔՀԿ-ների համար

Մշակված է «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ (ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ ԱԽ2) հետևյալ փորձագետների կողմից՝

*Մովսես Արիստակեսյան
Մուսաննա Եղիազարյան*

Սույն հետազոտությունն իրականացվել է Եվրոպական միության աջակցությամբ: Հետազոտության բովանդակությունը բացառապես հեղինակների կարծիքն է և կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետը:

Ե Ր Ե Վ Ա Ն
Հոկտեմբեր 2021

Բովանդակություն

Ի/հ ը/կ	Անվանումը	Էջ
	Բովանդակություն	2
1.	Հապավումներ	4
2.	Նախաբան և երախտիքի խոսք	6
3.	Ներածություն	8
4.	Բյուջետային համակարգը Հայաստանի Հանրապետությունում	11
	4.1. «Բյուջե» եզրույթի նկարագրությունը	11
	4.2. ՀՀ բյուջետային համակարգը	12
	4.3. Պետական բյուջե	14
	4.4. Համայնքային բյուջեներ	16
5.	Հանրային ֆինանսների կառավարման գործընթացները Հայաստանում	19
	5.1. Բյուջետային գործընթացը	19
	5.2. Միջնաժամկետ ծախսային ծրագրեր	21
	5.3. Ծրագրային բյուջետավորում	22
	5.4. Բյուջետային ծրագրերը և դրանց ներկայացվող պահանջները	23
	5.5. Ծրագրի միջոցառումները	25
	5.6. Արդյունքային ոչ ֆինանսական չափորոշիչները և դրանց ներկայացվող պահանջները	27
	5.7. Ծառայության որակը շահառուի տեսանկյունից գնահատող ցուցանիշները	28
	5.8. Ծառայության կամ ապրանքի որակի՝ որոշակի ստանդարտի համապատասխանության ցուցանիշը	29
	5.9. Ժամկետի ցուցանիշներ	29
	5.10. Վերջնական արդյունքի (նպատակի) ցուցանիշներ	30
6.	Ֆինանսական վերահսկողությունը Հայաստանում	31

	6.1. Ֆինանսական վերահսկողության դերը բյուջետային գործընթացում և առկա հիմնախնդիրները	31
	6.2. Ֆինանսական վերահսկողության տեսակները	33
	6.3. Ֆինանսական վերահսկողության մարմինները	33
	6.4. Ֆինանսական վերահսկողության մեթոդներն ու գործիքները	36
	6.5. Պետական ֆինանսների կառավարման մոնիթորինգի ոլորտում իշխանությունների և ՔՀԿ-ների միջև համագաործակցության միջազգային փորձը և դրա տեղայնացման հնարավորությունները Հայաստանում	37
	6.6. Քաղաքացիական հասարակության դերը բյուջետային գործընթացի բոլոր, այդ թվում հատկապես ֆինանսական վերահսկողության, փուլերում	39
7.	Օգտագործված գրականության ցանկ	41

Հ Ա Պ Ա Վ ՈՒ Մ Ն Ե Ր

Հ/Հ Ը/Կ	ՀԱՊԱՎՈՒՄ	ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ
1.	DFID	Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման նախարարություն
2.	ԱԲ	Այլընտրանքային բյուջեներ
3.	ԱԲԻ	Աուդիտի բարձրագույն ինստիտուտ
4.	ԱԺ	ՀՀ Ազգային ժողով
5.	ԱԺԲԳ	Ազգային ժողովի բյուջետային գրասենյակ
6.	ԱլԳ	Արևելյան գործընկերություն
7.	ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
8.	ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
9.	ԲԱՎ	Բյուջեի անկախ վերլուծություն
10.	ԲԲՀ	Բաց բյուջեի հետազոտություն
11.	ԳԶԲ	Գենդերային զգայուն բյուջե
12.	ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
13.	ԵՄ	Եվրոպական Միություն
14.	ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
15.	ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
16.	ԶԳ	Զարգացման գործընկերներ
17.	ԽՄ	Խորհրդատվական մարմին
18.	ԾԲ	Ծրագրային բյուջետավորում
19.	ԿԶՕ	«Ձևափոխելով մեր աշխարհը՝ Կայուն զարգացման 2030 օրակարգ»
20.	ԿՑ	Կատարողական ցուցանիշ
21.	ՀԱՊ	Հայաստանի ազգային պլատֆորմ
22.	ՀԲ	Համաշխարհային բանկ
23.	ՀԸԳՀ	ԵՄ-Հայաստան համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիր
24.	ՀԾԴ	Հանրային ծախսերի դիտարկում
25.	ՀԾՀ	Հանրային ծախսերի հսկում
26.	ՀԿ	Հասարակական կազմակերպություն
27.	ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
28.	ՀՀԶՄ	Համայնքային հեռանկարային զարգացման ծրագիր
29.	ՀՀՀՀ	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում
30.	ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
31.	ՀՊ	ՀՀ հաշվեքննիչ պալատ

32.	ՀՖԿ	Հանրային ֆինանսների կառավարում
33.	ՄԲ	Մասնակցային բյուջետավորում
34.	ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
35.	ՈՖՑ	Ոչ ֆինանսական ցուցանիշ
36.	ՊԵԿ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
37.	ՊԾՖՀ	Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականություն
38.	ՊԿՄ	Պետական կառավարման մարմին
39.	ՊԼՖՀ	Պետական ներքին ֆինանսական հսկողություն
40.	ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
41.	ՊՖԿ	Պետական ֆինանսների կառավարում
42.	ՊՖԿՀ	Պետական ֆինանսների կառավարման համակարգ
43.	ՊՖԿՀԲ	Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումներ
44.	ՊՖԿՌ	Պետական ֆինանսների կառավարման ռազմավարություն
45.	ՍԱ	Սոցիալական աուդիտ
46.	ՎՊ	ՀՀ վերահսկիչ պալատ
47.	ՏԱՊ	Տարեկան աշխատանքային պլան
48.	ՏԻԿ ՀԿ	«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ
49.	ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
50.	ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
51.	ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիա
52.	ՔՀ	Քաղաքացիական հանրություն
53.	ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
54.	ՔՀՖ	Քաղաքացիական հասարակության ֆորում
55.	ՖՆ	ՀՀ ֆինանսների նախարարություն
56.	ՖՎԲՄՀ	ՀՀ ԱԺ ֆինանսա-վարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով

ՆԱԽԱԲԱՆ ԵՎ ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Հանրային ֆինանսների ծախսման թափանցիկությունը և հաշվետվողականությունը, դրանց կառավարման արդյունավետության բարձրացումը, օգտագործման ժամանակ կոռուպցիոն ռիսկերից խուսափելը մշտապես եղել են անցումային շրջանում գտնվող երկրների, այդ թվում՝ հատկապես հետխորհրդային երկրների, կարևորագույն հիմնախնդիրներից մեկը:

Հանրային ֆինանսների կառավարման մոնիթորինգի ոլորտում իշխանությունների և ՔՀԿ-ների միջև համագործակցության միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև Սոցիալական հաշվետվողականության մոնիթորինգի պրակտիկայի համայնքի (COPSAM) կողմից 2018 թ. հունիսին հրապարակված «Համագործակցում են ավելի արդարացի և ներառական հասարակություն կառուցելու համար. Քաղաքացիական հասարակության բյուջետային գործունեությունը Եվրոպայում» հետազոտությունը¹ թույլ է տալիս հանգել հետևյալ հիմնական եզրակացությանը.

Եթե ՔՀԿ-ները կարող են համատեղել քաղաքականության հարցի խորը իմացությունը բյուջետային գործընթացի իրականացման բավարար գիտելիքների և իրավական պաշտպանության ռազմավարության հետ, ապա քաղաքականության վրա դրական ազդեցության հավանականությունը մեծանում է:

Հետևապես արդի պայմաններում խիստ կարևոր է բյուջետային համակարգի և ՀՀ պետական բյուջեի կազմման գործընթացի, բյուջետային ծրագրերի նկատմամբ ներկայացվող պահանջների և բյուջետային ծրագրերի կատարման մոնիթորինգի գործընթացի իրականացման վերաբերյալ պարզեցված համառոտ ձեռնարկի մշակումը՝ աջակցելու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և շահագրգիռ հանրության ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացմանը, ՔՀԿ անդամների բյուջեի իմացության և վերլուծության հմտությունների ձեռքբերմանը:

«Աջակցություն ֆինանսական գրագիտության բարձրացմանը. Բյուջետային ծրագրերի հասարակական մոնիթորինգի իրականացման համառոտ ձեռնարկը ՔՀԿ-ների համար» հանդիսանում է ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարության «Աջակցություն ՀԱՊ աշխատանքային խմբերի գործողություններին» ծրագրի շրջանակում 2020 թ. «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ-ի կողմից մշակված «ՀՀ բյուջեների ոչ ֆինանսական ցուցանիշների մոնիթորինգը (մշտադիտարկումը) քաղաքացիական հասարակության կազմակերպություններին վերապահելու մասին» հայեցակարգային մոտեցումների² իրագործման հաջորդական քայլերից մեկը:

¹ COPSAM, Communitie of practice for Social Accountability Monitoring, COLLABORATING TO BUILD MORE EQUITABLE AND INCLUSIVE SOCIETIES: CIVIL SOCIETY BUDGET WORK IN EUROPE, Originally published by JEAN ROSS, CONSULTANT— JUN 27, 2018, <http://copsam.com/collaborating-to-build-more-equitable-and-inclusive-societies-civil-society-budget-work-in-europe/>

² 1. [https://eaparmenianews.wordpress.com/2021/02/10/%d5%b0-%d5%a1-%d5%b5-%d5%a5-%d6%81-%d5%a1-%d5%af-%d5%a1-%d6%80-%d5%a3-%d5%b0%d5%b0-%d5%a2%d5%b5%d5%b8%d6%82%d5%bb%d5%a5%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%b8%d5%b9-%d6%86%d5%ab%d5%b6%d5%bd/](https://eaparmenianews.wordpress.com/2021/02/10/%d5%b0-%d5%a1-%d5%b5-%d5%a5-%d6%81-%d5%a1-%d5%af-%d5%a1-%d6%80-%d5%a3-%d5%b0%d5%b0-%d5%a2%d5%b5%d5%b8%d6%82%d5%bb%d5%a5%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%b8%d5%b9-%d6%86%d5%ab%d5%b6%d5%a1%d5%b6%d5%bd/)

2. https://drive.google.com/file/d/1cwgmcTJePVLzaP3WpaCDs_pv4jV6UJJK/view

Նշված մեթոդական ձեռնարկը նաև հիմք կհանդիսանա հետագայում վերապատրաստումների մոդուլների մշակման և ՔՀԿ-ների անդամների վերապատրաստման համար:

Սույն ձեռնարկի մշակումը համապատասխանում է բխում է **հետևյալ փաստաթղթերի գերակայություններից ու առաջնահերթություններից**.

1. ԱլԳ ՔՀՖ Համատեղ աշխատակազմի աշխատանքային փաստաթղթի³,
2. ԱլԳ ՔՀՖ 2-րդ աշխատանքային խմբի⁴ 3-րդ՝ «Ներդրումներ եւ ֆինանսների հասանելիություն» քաղաքական գերակայությամբ նախատեսված գործողություններին,
3. ԵՄ-Հայաստան Համընդհանուր եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի⁵,
4. Հայաստանի ազգային պլատֆորմի 2021-2022թթ ռազմավարության:

Սույն ձեռնարկի մշակումն իրականացրել է ՏԻԿ ՀԿ նախագահ Մովսես Արիստակեսյանը, ով ունի տնտեսագետի մագիստրոսական և կառավարման առաջատար մասնագետի որակավորում (MBA), հանրային ֆինանսների կառավարման միջազգային փորձագետ է և որպես այդպիսին մասնակցել է Հայաստանում և արտերկրներում համանման միջազգային հետազոտական ծրագրերի իրականացմանը:

Հետազոտության ընթացքում օգտագործվել է սույն հիմնախնդրով երկար տարիներ զբաղվող տնտեսական գիտությունների թեկնածու Սուսաննա Եղիազարյանի խորհրդատվությունը, ով հանրային ֆինանսների կառավարման ազգային փորձագետ է և որպես այդպիսին մասնակցել է Հայաստանում համանման հետազոտական ու ուսուցողական ծրագրերի իրականացմանը:

ՏԻԿ ՀԿ ստեղծագործական թիմին մեծապես օգնել են ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ քարտուղարության աշխատակիցները՝ տնօրեն Հերիքանազ Հարությունյանի գլխավորությամբ, ինչի համար ստեղծագործական թիմն արտահայտում է իր խորին շնորհակալությունը:

Մովսես Արիստակեսյան

Սույն հետազոտության ստեղծագործական թիմի ղեկավար,

«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ

3

https://eeas.europa.eu/sites/default/files/swd_2021_186_f1_joint_staff_working_paper_en_v2_p1_1356457_0.pdf?utm_source=newsletter&utm_medium=email&utm_campaign=eap_csf_members_update_the_joint_staff_working_document_eap_csf_awards_working_group_meetings_and_national_platforms_updates_novosti_chlenov_fgo_vp_sov_mestnyy_rabochiy_dokument_personala_nagrady_fgo_vp_vstrechi_rabochih_grupp_i_obnovleniya_nacionalnyh_platform&utm_term=2021-07-22

⁴ <https://eap-csf.eu/working-group-two/>

⁵ <https://drive.google.com/file/d/0B1lkTXIfhaB3eVozbVM5RDNwZXc/view>

III. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների շրջանակում ծրագրային բյուջետավորման ներդրման արդյունքում ՀՀ պետական բյուջեների ծրագրային բյուջետավորման ձևաչափով կազմումը հնարավորություն է տալիս հետևելու բյուջետային ծրագրերի արդյունքային ցուցանիշների կատարմանը՝ ֆինանսական ու ոչ ֆինանսական չափանիշներով: **Բյուջեի կատարման նման վերլուծությունը կատարողականի մշտադիտարկման հիմնական գործիքն է:** Այն իրենից ներկայացնում է հաստատված բյուջետային ծրագրերի ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների համեմատությունը բյուջեի կատարողականում ներկայացված համապատասխան ցուցանիշների հետ: Համեմատական վերլուծության արդյունքներն այնուհետև օգտագործվում են բյուջետային ծրագրերի իրականացման գնահատման, եզրակացությունների և առաջարկությունների մշակման համար: Այս առումով շատ կարևոր է **արդյունքների մշտադիտարկման և վերլուծության գործուն համակարգի ստեղծումը և կայացումը**, բյուջետային ծրագրերի արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի համակարգի բարելավումը՝ **համակարգում ներգրավելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներուժը**, ինչը հնարավորություն կտա բացահայտելու, թե որքանով է հաջողվել ծրագրավորված ցուցանիշների ձեռք բերումը, որոնք են դրանց հասնելու խոչընդոտները և որոնք՝ լուծման ուղիները, և այլն⁶:

Ռազմավարական փաստաթղթերի բազմազանության պարագայում երկրի բնակչության ու քաղաքացիական հասարակության համար շատ կարևոր է գործող ռազմավարական փաստաթղթերում (ծրագրերում) նախանշված բազմաթիվ նպատակների ու խնդիրների իրականացումը բնորոշող բազմաբնույթ ցուցանիշների կատարողականի վերաբերյալ տեղեկացվածությունը: Մակայն երկրի բնակչությունը՝ որպես այդ ծրագրերի հիմնական շահառու, ըստ էության, չի զգում դրանց ներառականությունը, իսկ քաղաքացիական հասարակությունը բավարար չափով տեղեկացված չի լինում դրանց արդյունքների մասին: Մեր դիտարկմամբ ՀՀ պետական կառավարման մարմինների պաշտոնական կայքերում կամ չկան այդ ծրագրերի կատարման մասին հաշվետվություններ, կամ եթե կան, ապա չեն արտացոլում այդ ծրագրերով նախատեսված նպատակների ամբողջական իրագործումը. **շատ դեպքերում էլ այդ հաշվետվություններով ներկայացված ցուցանիշները հավատ չեն ներշնչում:** Կարելի է դիտարկել հաշվետվողականության ու հետադարձ կապի բավականին ցածր մակարդակ, ինչը բյուջետային ծրագրերով մատուցվող հանրային ծառայությունների ծավալի ու որակի գնահատման վրա կարող է ունենալ առանցքային ազդեցություն: Առանձնակի կարևորության հիմնախնդիր է ոլորտային ռազմավարությունների ու այդ ոլորտներում բյուջետային ծրագրերի համահունչ լինելու հանգամանքը:

Այս հիմնախնդիրներն արտացոլված են մի շարք միջազգային և ազգային փաստաթղթերում՝ որպես նպատակներ, գերակայություններ և հանձնառություններ, որոնցով նախատեսվում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ակտիվ ներգրավում հանրային ֆինանսների կառավարման բոլոր փուլերին՝ սկսած պետական ու համայնքային բյուջեների

⁶ «Ծրագրային բյուջետավորման բարեփոխումները Հայաստանում». ՀՀ Ազգային ժողով, Երևան 2014
[http://www.parliament.am/committee_docs/5/FV/Brochure%201%20\(10-09-2014\).pdf](http://www.parliament.am/committee_docs/5/FV/Brochure%201%20(10-09-2014).pdf)

կազմման, հաստատման, կատարման, հսկողության փուլերից, ավարտված բյուջետային ծրագրերի ու ծախսերի դիտարկման և գնահատման փուլերով:

Այսպես,

1. ՄԱԿ կողմից ընդունված «Ձևափոխելով մեր աշխարհը՝ Կայուն զարգացման 2030 օրակարգ» փաստաթղթի (այսուհետ՝ ԿԶՕ)⁷ (Կայուն զարգացման նպատակները) **17-րդ նպատակով՝ «Համագործակցություն՝ նպատակների համար»**, նախատեսված 19 գործողություններից առնվազն 5-ով նախատեսվում են ֆինանսա-բյուջետային և հարկային միջոցառումների իրականացում, որոնք **կակտիվացնեն գլոբալ գործընկերությունը հանուն կայուն զարգացման:**
2. **2017 թ. Նոյեմբերի 24-ն կնքված ԵՄ-Հայաստան համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրում** (այսուհետ՝ ՀԸԳՀ)⁸ հստակ ամրագրված են ՀՀ կառավարության հանձնառությունները հանրային ֆինանսների կառավարման և մոնիթորինգի կատարելագործման ու քաղաքացիական հասարակության հզորացմանը աջակցելու վերաբերյալ, մասնավորապես՝
 - «գլոբալ ֆինանսական համակարգի կայունությանը և ամբողջականությանը նպաստում, ֆինանսական համակարգի տարբեր սուբյեկտների, այդ թվում՝ կարգավորում և վերահսկողություն իրականացնողների միջև համագործակցության խթանում» (Հոդված 61),
 - «Հայաստանի Հանրապետության իշխանությունները պետք է ձեռնարկեն համապատասխան ցանկացած միջոցառում՝ ակտիվ կամ պասսիվ կոռուպցիայի փորձերը կանխելու և վերացնելու և ԵՄ ֆինանսական միջոցների իրականացմանն առնչվող ընթացակարգերի ցանկացած փուլում շահերի բախումը բացառելու ուղղությամբ» (Հոդված 353),
 - ՀԸԳՀ XII հավելվածի հանձնառություններն ամբողջությամբ,
 - «Քաղաքացիական հասարակության հետ համագործակցության» մասին ՀԸԳՀ 21-րդ գլուխն ամբողջությամբ:
3. Հայաստանի քաղաքացիական հասարակության ներգրավման 2018-2020թթ ճանապարհային քարտեզը⁹,
4. ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363 – Ա որոշմամբ հաստատված և ՀՀ ազգային ժողովի կողմից հավանության արժանացած **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. ծրագրով»**¹⁰ կառավարության հիմնարար ուղենիշներ են համարվել.
 - կառավարության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը,

⁷ «Ձևափոխելով մեր աշխարհը՝ Կայուն զարգացման 2030 օրակարգ»,

1. <http://www.un.org/sustainabledevelopmentgoals>, <https://www.un.org/sustainabledevelopmentgoals>

2. <https://www.undp.org/content/undp/en/home/sustainable-development-goals.html>

⁸ 1. https://eeas.europa.eu/delegations/armenia/896/armenia-and-eu_en

2. https://eeas.europa.eu/delegations/armenia/37967/eu-armenia-comprehensive-and-enhanced-partnership-agreement-cepa_en

3. <https://drive.google.com/file/d/0B1kTXIfhaB3eVozbVM5RDNwZXc/view>

⁹ 1. https://eeas.europa.eu/delegations/armenia/63126/node/63126_en,

2. https://eeas.europa.eu/delegations/armenia/63127/node/63127_hy

¹⁰ <https://www.gov.am/files/docs/4586.pdf>

- կոռուպցիայի հանրային մերժումը և կոռուպցիայից զերծ հանրությունը,
- պետական ծախսերի և գույքի կառավարման արդյունավետության բարձրացումը,
- հանրային ֆինանսների, այդ թվում՝ վարկային ու դրամաշնորհային ծրագրերի, ծախսարդյունավետ կառավարումը,

որոնց իրականացմանն է նվիրված կառավարության ծրագրի 6-րդ բաժնի առանձին հատվածներ:

Ըստ այդմ նպատակ է դրվում, որ.

- *«Ծրագրի արդյունավետության և օգտավետության բարձրացման նպատակով կներդրվի բյուջետային ծրագրերի գնահատման կանոնավոր գործընթաց, որի բացակայությունը սահմանափակում է բյուջետային ծրագրերի արդյունքները և ազդեցությունը գնահատելու, բյուջետային ծրագրերը վերանայելու և բարելավելու Կառավարության հնարավորությունները:*
- *Հանրային միջոցների օգտագործման հստակ ներգործությունը գնահատելու համար կներդրվեն բյուջետային ծրագրերի գնահատման այնպիսի չափանիշներ և հաշվետվողականության այնպիսի ստանդարտներ, որոնք թույլ կտան բարելավել թե՛ ռեսուրսների ծախսման արդյունավետությունը և թե՛ ֆինանսական կարգապահությունը:»:*

Վերոնշյալ փաստաթղթերով նախատեսված հանձնառությունների կատարման նպատակով խիստ անհրաժեշտ է, որպեսզի հանրապետությունում ունենանք համապատասխան գիտելիքներ ու ունակություններ ունեցող քաղաքացիական հասարակության ցանցեր, որոնք կիրականացնեն պետական բյուջեների բյուջետային ծրագրերի կատարման ընթացքի, դրանց արդյունքային ոչ ֆինանսական կատարողական ցուցանիշների մշտադիտարկում: Այդ մշտադիտարկման արդյունքները շատ օգտակար կլինեն ինչպես պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց պետական բյուջեների կատարման նկատմամբ վերահսկողական սահմանադրական պարտականությունների կատարման գործում, այնպես էլ՝ պետական ու համայնքային բյուջեների շահառուներին՝ բյուջետային ծրագրերով նախատեսված նպատակների իրականացմանը իրազեկվելու տեսակետից:

Մեթոդական ձեռնարկի նպատակը

Սույն մեթոդական ձեռնարկի նպատակն է աջակցել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և շահագրգիռ հանրության ֆինանսական գրազիտության մակարդակի բարձրացմանը՝ մասնավորապես բյուջետային համակարգի, բյուջետային գործընթացի, ծրագրային բյուջետավորման հիմնական հասկացությունների վերաբերյալ իրազեկմանը, ինչպես նաև բյուջետային ծրագրերի և միջոցառումների ձևավորման, դրանց վերուծության և կատարման մոնիթորինգի իրականացման հմտությունների ձեռքբերմանը:

Սույն մեթոդական ձեռնարկը կարող է օգտակար լինել՝

- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անդամների համար՝ հնարավորություն ընձեռելով նրանց իրենց մասնագիտական կարողություններն ու

հատությունները հզորացնելու, բյուջետային ծրագրերի մոնիթորինգի հետագա գործընթացներին անմիջականորեն մասնակցելու ուղղությամբ,

- **ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ անդամ այն կազմակերպությունների ու ՀՀ այլ ՔՀԿ-ների համար**, որոնք ցանկություն կունենան ներգրավվելու հանրային ֆինանսների հասարակական վերահսկողության ու մոնիթորինգի գործընթացին եւ կազմել կոալիցիաներ այդ գործընթացին մասնակցելու նպատակով,
- **Զանգվածային լրատվամիջոցներին**, քանի որ նրանք հնարավորություն կունենան ընդլայնելու իրենց գիտելիքները և հզորացնելու իրենց հատությունները ՀՀ բյուջետային համակարգի, բյուջետային ծրագրերի արդյունքային ու կատարողական ցուցանիշների վերաբերյալ, մասնագիտորեն հստակ, ճշգրիտ ու արհեստավարժ կերպով հանրությանը լուսաբանելու հանրային ֆինանսների հասարակական մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը,
- **ԱԼԳ ՔՀՖ ազգային պլատֆորմների ու դրանց անդամ կազմակերպությունների համար**, քանի որ նրանք համառոտ տեղեկատվություն կունենան ծրագրային բյուջետավորման հիմունքների ու ՔՀԿ-ների միջոցով Հայաստանում բյուջետային ծրագրերի մոնիթորինգի իրականացման նախատեսվող մեխանիզմների մասին:

Սույն մեթոդական ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև ՀՀ ազգային ժողովի պատգամավորների ու փորձագետների, ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների համար, որոնց հետաքրքրում են հանրային ֆինանսների կառավարման հիմնախնդիրները:

IV. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

4.1. «Բյուջե» եզրույթի նկարագրությունը

«Բյուջե» եզրույթի տարբեր նկարագրություններ կան ինչպես մասնագիտական գրականության մեջ, այնպես էլ այլ հանրամատչելի աղբյուրներում:

Օրինակ, Վիկիպեդիա ազատ հանրագիտարանում¹¹ նշվում է, որ. «**Բյուջե** տերմինն առաջացել է անգլերեն **«Budget»** բառից, որը նշանակում է դրամապանակ, պայուսակ, կաշվե պարկ, [փողով](#) լի պարկ:»:

Սակայն նման բառացի թարգմանությունը չի բնորոշում բյուջեի էությունը և տնտեսական բովանդակությունը: «Բյուջեն», ըստ էության, որոշակի օբյեկտի (ընտանիքի, գործունեության, ձեռնարկության, պետության և այլն) ֆինանսական եկամուտների և ծախսերի պլան է, որը սահմանվում է ճշգրիտ ժամանակահատվածի համար, սովորաբար 1 տարով: Բյուջեն դա կարևոր հասկացություն է ինչպես [միկրոէկոնոմիկայում](#), այնպես էլ՝ [մակրոէկոնոմիկայում](#), (պետական բյուջե): Ցանկացած հասարակարգում բյուջեն տվյալ պետության դրամական միջոցների համապետական ֆոնդի գոյացման և օգտագործման հիմնական ֆինանսական պլանն է (եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը):

¹¹ <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%B5%D5%B8%D6%82%D5%BB%D5%A5>

Մասնագիտական գրականության մեջ¹² սահմանվում է, որ. «Բյուջեն ծախսերի և եկամուտների հաշվեկշիռն է: Ընտանեկան կամ անձնական բյուջեն ցույց է տալիս, թե որքան գումար եք ստացել, ինչքան փող է ծախսվել որոշակի ժամանակահատվածում»:

Բյուջեն կարևոր դեր է խաղում ինչպես անձնական, ընտանեկան ֆինանսական հոսքերի, այնպես էլ մասնավոր ընկերությունների, ձեռնարկությունների ու հանրային (պետական ու համայնքային) հասարակական ամբողջական արդյունքի բաշխման ու վերաբաշխման գործում:

Այդ առումով բյուջետավորումը (այլ խոսքերով ասած ֆինանսական հոսքերի կառավարումն ու բյուջետային գործընթացը) շատ կարևոր նպատակներին հասնելու օգտակար գործիք է: Անկախ եկամուտների չափից՝ նպատակին հասնելու համար կարող է պահանջվել որոշակի մեծ գումար: Բյուջետավորումն օգնում է պահպանել ֆինանսական կարգապահությունը և կուտակել անհրաժեշտ գումար:

Դա վերաբերում է ինչպես անհատներին, այնպես էլ՝ գործարար համայնքին, պետությանն ու տեղական ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ ՏԻՄ):

Այսպես, ըստ հետազոտությունների Հայաստանի բնակչության մեծամասնությունը կարևորում է բյուջեի պլանավորումը, սակայն 1/3-ից ավելին գործնականում չի պլանավորում¹³: Դրա արդյունքում շատ հաճախ բնակչությունն ընկնում է ծանր ֆինանսական վիճակի մեջ՝ դրա լուծումը գտնելով վարկային միջոցներ ձեռք բերելու և փոխառություններ ստանալու կործանարար գործիքների մեջ:

Նույն կերպ սխալ բյուջետավորումը ազդում է գործարար համայնքի կայուն տնտեսական գործունեության վրա: Այդ ազդեցությունը հանրային ֆինանսական միջոցների վրա բնութագրվում է համապատասխան բյուջեների պակասորդներով և պետական պարտքի մեծացմամբ: Հանրային միջոցների անարդյունավետ օգտագործման ու վատնումների մասին բազմաթիվ տեղեկատվություն կարելի է գտնել ՀՀ բարձրագույն անկախ աուդիտիական մարմնի՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի (այսուհետ՝ ՀՊ)¹⁴ եզրակացություններում և ՀՀ ԱԺ բյուջետային գրասենյակի (այսուհետ՝ ԱԺԲԳ)¹⁵ ուսումնասիրությունների նյութերում:

Բյուջեն ֆինանսավարկային համակարգի հիմնական և առաջատար օղակն է: Այն ծառայում է որպես ֆինանսական կառավարման լծակ և վճռական դեր է խաղում տնտեսության մակարդակով արժեքային համամասնությունների ձևավորման ու կարգավորման, ինչպես նաև տնտեսության վերակառուցման և կառուցվածքային փոփոխությունների գործնական խնդիրների լուծումն անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով ապահովելու գործում:

4.2. ՀՀ բյուջետային համակարգը

ՀՀ բյուջետային համակարգը սահմանվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով¹⁶, որի համաձայն ՀՀ բյուջետային համակարգը ֆինանսական,

¹² <https://abcfinance.am/budget.html>

¹³ Ամբողջական հոդվածը կարող էք կարդալ այս հասցեով. <https://abcfinance.am/>

¹⁴ <http://armsai.am/>

¹⁵ http://www.parliament.am/budget_office.php

¹⁶ <https://www.arlis.am/>

դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա հիմնված երկու մակարդակի բյուջեների՝ պետական և համայնքների բյուջեների ամբողջությունն է:

ՀՀ բյուջետային համակարգը հիմնվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների վրա՝

- ա) բյուջետային համակարգի միասնականություն,
- բ) բյուջետային համակարգի մեջ մտնող տարբեր մակարդակների բյուջեների միջև բյուջետային մուտքերի և ելքերի տարանջատում,
- գ) բյուջեների ինքնուրույնություն,
- դ) բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման լրիվություն,
- ե) բյուջեների հաշվեկշռվածություն,
- զ) բյուջետային ելքերի ամբողջական (համախառն) ծածկվածություն,
- է) բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետություն,
- ը) բյուջեների հրապարակայնություն,
- թ) բյուջետային միջոցների հասցեագրվածություն և նպատակայնություն,
- ժ) բյուջեների իրատեսություն:

Պետական բյուջեն և համայնքների բյուջեները կազմում են ՀՀ համախմբված բյուջեն, որի մուտքերը նշված բյուջեներին օրենքով ամրագրված աղբյուրներից ձևավորվող դրամական միջոցների, իսկ ելքերը՝ օրենքով սահմանված ուղղություններով ծախսվող դրամական միջոցների համապատասխան հանրագումարներն են:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն. «Պետական և համայնքի բյուջեները՝ պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրեր են»:

Այս սահմանումներից երևում է, որ բյուջեն Կառավարության գործունեության և որդեգրած քաղաքականությունների արտացոլումն է, որով պետք է նաև բացահայտվի, թե որ ոլորտներում են Կառավարության առաջնահերթությունները և ինչ ուղղությամբ է շարժվում պետությունը, այլ կերպ ասած՝ բյուջեն այս առումով նաև քաղաքական փաստաթուղթ է: Բյուջեն նաև տնտեսավարողների և ֆիզիկական անձնաց եկամուտների վերաբաշխման, տնտեսության մեջ պետության միջամտության և կարգավորումների գործիք է, և այս գործառույթներն անվանում են նաև հարկաբյուջետային կամ ֆիսկալ քաղաքականություն:

Բյուջեն որպես ֆինանսական փաստաթուղթ, քանակական արտահայտությամբ ցույց է տալիս պետության կողմից դրամական ռեսուրսների կենտրոնացման և դրանց օգտագործման գործնառնական: Բյուջեն նաև իրավական փաստաթուղթ է, որը հաստատվելով երկրի օրենսդիր մարմնի կողմից, ձևով է բերում օրենքի ուժ:

4.3. Պետական բյուջե

Պետական բյուջեն Կառավարության ֆինանսական ծրագիրն է, որը կազմվում է մեկ օրացույցային տարվա համար և հանդիսանում է տվյալ տարվա ընթացքում Կառավարության գործողությունները և քաղաքականությունները ֆինանսավորող փաստաթուղթ: Պետական բյուջեն ցույց է տալիս, թե պլանավորված գործողությունների համար ինչ ֆինանսական միջոցներ են նախատեսված, այսինքն՝ ծախսերը, ինչպես նաև, թե ինչ աղբյուրներից են գոյանալու այդ ֆինանսական միջոցները, այսինքն՝ մուտքերը, ներառյալ եկամուտները:

Պետական բյուջեի **եկամուտներ**ի աղբյուրներն են՝ հարկային եկամուտները, պետական տուրքերը, պաշտոնական դրամաշնորհները, այլ եկամուտներ: Պետական բյուջեի եկամտային մասի ձևավորման գործընթացը հստակ կանոնակարգվում է բյուջետային, հարկային և օրենսդրության մյուս տեսակներով:

Պետական բյուջեի միջոցով ֆինանսավորվում են պետական նշանակության **ծրագրերը և ծախսերը**՝ հետևյալ հիմնական ուղղություններով՝

- ա) ընդհանուր բնույթի պետական ծառայություններ,
- բ) պաշտպանություն,
- գ) հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն,
- դ) կրթություն և գիտություն,
- ե) առողջապահություն,
- զ) սոցիալական ապահովություն,
- է) բնակարանային կոմունալ տնտեսություն,
- ը) մշակույթ, սպորտ և կրոն,
- թ) վառելիքաէներգետիկ համալիր,
- ժ) գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ջրային տնտեսություն և ձկնաբուծություն,
- ժա) լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ (բացառությամբ վառելիքի), վերամշակող արդյունաբերություն, շինարարություն և բնապահպանություն,
- ժբ) տրանսպորտ և կապ, ճանապարհային տնտեսություն,
- ժգ) կառավարությանը օրենքով վերապահված իրավասությունների իրականացման այլ ուղղություններ:

Պետական բյուջեում նախատեսվում է կառավարության պահուստային ֆոնդ, որը տվյալ տարվա պետական բյուջեում նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման, պետական բյուջեում չկանխատեսված ելքերի, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ելքերի ֆինանսավորման աղբյուրն է: Պետական բյուջեի ծախսային մասում՝ կառավարության պահուստային ֆոնդը ներկայացվում է առանձին հոդվածով: Պահուստային ֆոնդից հատկացումները կատարվում են կառավարության որոշումների հիման վրա

Կառավարության պահուստային ֆոնդի մեծությունը չի կարող գերազանցել տվյալ տարվա պետական բյուջեի մասին՝ օրենքով նախատեսված ծախսերի 5 տոկոսը:

Պետական բյուջեի ծախսերում համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվում են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով՝ համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ՝ **ֆինանսական համահարթեցման դոտացիաներ**, որոնց ընդհանուր գումարը (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 93-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) **սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի 4 տոկոսը:**

Պետական բյուջեի ծախսերում կարող են նաև նախատեսվել համայնքների բյուջեներին հատկացվող՝

ա) **այլ դոտացիաներ**՝ համայնքի բյուջեի ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով որևէ ծախսատեսակի (ծրագրի) իրականացման հետ չկապակցված, անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ,

բ) **սուբվենցիաներ**՝ համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ: Սուբվենցիաների տրամադրումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

4.4. Համայնքների բյուջե¹⁷

Համայնքներում բյուջետավորման գործընթացը կազմակերպվում է ինչպես «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, այնպես էլ՝ «Տեղական ինքնակառավարման մասին», «Երեւանում տեղական ինքնակառավարման մասին», «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքներում սահմանված դրույթներով (նշված օրենքների հղումները տրված են սույն ձեռնարկին կից ներկայացված օգտագործված գրականության ցանկում):

Ըստ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի՝ համայնքի բյուջեի ձևավորման **հիմնական սկզբունքներն են.**

- ՀՀԶԾ-ի հիման վրա համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը,
- պահուստային ֆոնդի ստեղծումը,
- համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը,
- խնայողականությունը,
- արդյունավետությունը,
- հավաստիությունը և հստակությունը,
- հրապարակայնությունը:

¹⁷ Այս մասում օգտագործվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում տեղադրված մեթոդական ուղեցույցները, <http://mtad.am/hy/methodological-guides/>

Համայնքի բյուջեի կառուցվածքը, ՏԻՄ-երի կողմից իրականացվող լիազորությունների և դրանց ֆինանսավորման համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, բաժանվում է հետևյալ բաղկացուցիչ մասերի՝¹⁸

ա) համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե),

բ) համայնքի բյուջեի ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե)¹⁹:

Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, բյուջետային մուտքերն են պետական կամ համայնքների բյուջեներ ստացվող դրամական միջոցները: Բյուջետային մուտքերը ներառում են տվյալ բյուջեին օրենքով ամրագրված բյուջետային եկամուտները, բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, բյուջեից տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների գումարների վերադարձից, ոչ դրամային տեսքով այլ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող, ինչպես նաև ներգրավված փոխառու և այլ դրամական միջոցները:²⁰

Մուտքերի գծով համայնքի բյուջեն (վարչական և ֆոնդային մասերը) իր մեջ ներառում է (են)․

- համայնքի բյուջեին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող եկամուտները,
- դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցները:

Համայնքների բյուջեների մուտքերի շրջանակը ընդգրկում է տարբեր հարկատեսակներ, պետական տուրքի որոշ տեսակներ, տեղական տուրքեր և վճարներ, ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից եկամուտներ, պաշտոնական դրամաշնորհներ, այլ եկամուտներ, փոխառու միջոցներ:

Համայնքների բյուջեների մուտքերը կարելի է խմբավորել ըստ տարբեր չափանիշների²¹․

Ըստ ստացման հաճախականության՝

- ընթացիկ եկամուտներ,
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքեր,
- բյուջեին միանվագ հատկացվող այլ մուտքեր:

Ընթացիկ եկամուտները մշտական, որոշակի պարբերականությամբ կատարվող բյուջետային մուտքերն են, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերը՝ միանվագ ստացվող:

Ըստ ֆինանսական ինքնուրույնության ապահովման՝

- սեփական եկամուտներ,
- պաշտոնական դրամաշնորհներ,

¹⁸ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 28

¹⁹ Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցները (այդ թվում՝ ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդի միջոցները) չեն կարող փոխանցվել համայնքի բյուջեի վարչական մաս՝ բացառությամբ օրենքի 28.1-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետով սահմանված դեպքի:

²⁰ Համայնքի վարչական և ֆոնդային բյուջեների մուտքերն ու ելքերը առավել մանրամասն սահմանված են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28¹-րդ և 28²-րդ հոդվածներում

²¹ «Համայնքի բյուջետավարման ուղեցույց», ԱՄՆ ՄՁԳ Տեղական ինքնակառավարման ծրագիր, 3-րդ փուլ, Երևան, 2010թ.

- ✓ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցներ:

Ըստ տեսակների՝

- հարկային եկամուտներ և տուրքեր,
- պաշտոնական դրամաշնորհներ,
- այլ եկամուտներ,
- դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցներ:

Համայնքի բյուջեի վարչական մասի մուտքերի մեջ ներառվում են՝

1. հարկային եկամուտները,
2. տուրքերը (պետական և տեղական),
3. պաշտոնական դրամաշնորհները՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների, այլ դոտացիաների, ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) և այլ աղբյուրներից ստացվող դրամաշնորհների տեսքով,
4. այլ եկամուտներ՝ հողերի և գույքի վարձակալությունից, վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից, մատուցվող համայնքային ծառայությունների դիմաց գանձվող վճարներից, տեղական վճարներից և այլն,
5. դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները՝ պետական բյուջեից և (կամ) այլ համայնքների բյուջեներից տրամադրվող բյուջետային փոխատվությունները, դրանց վերադարձից ստացվող միջոցները, վարչական բյուջեի միջոցների ազատ մնացորդը և այլն:

Համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքերի մեջ ներառվում են՝

1. պաշտոնական դրամաշնորհները՝ պետական բյուջեից և այլ աղբյուրներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) տեսքով,
2. այլ եկամուտներ՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումները և այլն,
3. ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերը,
4. դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները՝ պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ստացված վարկերը, ՏԻՄ-երի թողարկած պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները, ֆոնդային բյուջեի միջոցների ազատ մնացորդը և այլն:

Համայնքի բյուջեում կան նաև եկամուտի տեսակներ (օրինակ՝ ՏԻՄ-երին ենթակա ձեռնարկությունների տրամադրության տակ մնացած շահույթի ազատ մնացորդը), որոնք կարող են ամրագրվել և՛ վարչական, և՛ ֆոնդային բյուջեներում՝ մասհանումային կամ ամբողջական տարբերակով:

Համայնքի բյուջեի ծախսերը և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները դասակարգվում են ըստ.²²

- ✓ ՏԻՄ-երի գործառնությունների,
- ✓ գերատեսչական բաշխվածության,
- ✓ ծախսերի տնտեսագիտական բովանդակության:

Համայնքի բյուջեի ծախսերի **գործառական (ֆունկցիոնալ) դասակարգումը** ՏԻՄ-երի հիմնական գործառնությունների իրականացման ֆինանսավորման ուղղություններն արտահայտող բյուջետային ծախսերի խմբավորումն է:

Համայնքի բյուջեի ծախսերի **տնտեսագիտական դասակարգումը** ծախսերի խմբավորումն է՝ դրանց տնտեսագիտական բովանդակությանը համապատասխան: Բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգումն ունի հետևյալ կառուցվածքը՝

- ընթացիկ ծախսեր,
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ:

Համայնքի բյուջեի ընթացիկ ծախսերն են՝

- ❖ աշխատանքի վարձատրությունը,
- ❖ տոկոսավճարները,
- ❖ ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը,
- ❖ սուբսիդիաները,
- ❖ դրամաշնորհները,
- ❖ սոցիալական նպաստները և կենսաթոշակները,
- ❖ այլ ընթացիկ ծախսերը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնություններն են՝

- ❖ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը,
- ❖ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից միջոցների ստացումը:

Համայնքի բյուջեի ծախսերի **գերատեսչական դասակարգումը** ծախսերի խմբավորումն է՝ ըստ բյուջետային միջոցների անմիջական ստացողների՝ ՏԻՄ-երի գերատեսչական կառուցվածքների, օրինակ՝ կրթական, մշակութային, մարզական հաստատությունների և այլն:

ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների իրականացման **ընթացիկ ծախսերի** հիմնական ուղղություններն են.

1. ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների ծախսերը,

²² «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 39

2. օրենքով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների իրականացման ընթացիկ ծախսերը համայնքի գործունեության բոլոր ոլորտներում (բաժիններում),
3. հիմնական բաժիններին (ուղղություններին) չդասվող պահուստային ֆոնդը:

Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ելքերն են՝

- ՏԻՄ-երի կողմից իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում կատարվող կապիտալ ծախսերը,
- Ֆոնդային բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավված վարկերի և ՏԻՄ-երի թողարկած պարտատոմսերի տեղաբաշխումից միջոցների մարումները և բյուջետային փոխատվությունների տրամադրումը,
- Ֆոնդային բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման նպատակով՝ ֆոնդային բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների հատկացումները,
- հիմնական բաժիններին (ուղղություններին) չդասվող պահուստային ֆոնդը:

Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդերի միջոցով իրականացվում է բյուջեի վարչական և ֆոնդային մասերի **հավասարակշռությունը**: Մի կողմից, համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցները կարող են դառնալ ֆոնդային բյուջեի եկամուտներ, մյուս կողմից՝ (համայնքի ավագանու որոշումներով) չնախատեսված և լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման աղբյուր:

Համայնքի բյուջեն ունի պահուստային ֆոնդ, որը կարող է օգտագործվել տվյալ տարվա բյուջեով չկանխատեսված ելքերի կամ նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման համար:

Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը կարող է նախատեսվել համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտների 5-20 տոկոսի չափով:

Համայնքի բյուջեի ֆոնդային մասում կարող է ձևավորվել պահուստային ֆոնդ, որը չի կարող գերազանցել համայնքի բյուջեի ֆոնդային մասի եկամուտների 30 տոկոսը: Պահուստային ֆոնդերը կարող են օգտագործվել միայն համայնքի ավագանու որոշմամբ:

V. ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

5.1. Բյուջետային գործընթացը

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն «Բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը

հաստատելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կանոնակարգված գործունեությունն է»:

Բյուջեների նախագծերը կազմվում են կառավարության գործունեության, ինչպես նաև համայնքների զարգացման ծրագրերին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունում բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

Բյուջետային գործընթացը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «ՀՀ պետական բյուջեի մասին»

«ՀՀ տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում ՀՀ տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներով:

Տվյալ բյուջետային տարվա համար բյուջետային գործընթացը սկսվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշման ընդունման օրը և ավարտվում՝ տվյալ բյուջետային տարվա բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու օրը:

Առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին որոշմամբ հաստատված ժամանակացույցով սահմանվում են միջնաժամկետ ծախսերի ծրագրի և պետական բյուջեի նախագծերի մշակման աշատանքների կատարողները, կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները, փաստաթղթերը ստացող հանրային իշխանության մարմինները և աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները:

2020 թվականի բյուջետային գործընթացում որոշակի փոփոխություններ են իրականացվել նախորդ 2019 թվականի բյուջետային գործընթացի համեմատ: Արդյունքում նախկինի համեմատ որոշակիորեն պարզեցվել են այդ գործընթացները և հնարավորինս վերացվել են միջնաժամկետ ծախսային ծրագրերի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և տարեկան բյուջեի կազմման գործընթացների միջև կրկնություններն ու խզումները, ինչպես նաև ավելի շատ ժամանակ է հատկացվել ծախսային քաղաքականության և ծրագրերի շուրջ բովանդակային քննարկումների համար:

- պարզեցվել է բյուջետային գործընթացը՝ բացառելով ՄԺԾԾ և տարեկան բյուջեի կազմման գործընթացների կրկնությունները և խզումները: Հայտերը ներկայացվում են միաժամանակ՝ մեկ ընդհանուր փաստաթղթով,
- երկարացվել է ծախսային քաղաքականությունների և ծրագրերի շուրջ բովանդակային քննարկումներին հատկացվող ժամանակը,
- վերանայվել է ՄԺԾԾ փաստաթղթի բովանդակությունն ու նշանակությունը: Այն պետք է վերաձևակերպել որպես ավելի սեղմ փաստաթուղթ, որով սահմանվում են միջնաժամկետ հատվածի մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակները, այդ ժամանակահատվածի համար ոլորտային ծախսային քաղաքականության թիրախները, կանխատեսվող ոլորտային կամ գերատեսչական ծախսային չափաքանակները,
- միջոցառումները պետք է խմբավորվեն ըստ իրականացվող ծախսերի հիմքում դրված պարտավորությունների բնույթի՝ **պարտադիր** և **հայեցողական**:
- ՀՀ պետական մարմիններն, իրենց ՄԺԾԾ (ներառյալ առաջիկա տարվա պետական բյուջեի) հայտերը կազմում են հիմք ընդունելով գործող ՄԺԾԾ-ով տվյալ տարվա համար

հաստատված ծախսային չափաքանակները, ընդ որում, այդ հայտերը ներկայացվում են միաժամանակ՝ մեկ ընդհանուր փաստաթղթով:

5.2. Միջնաժամկետ ծախսային ծրագրեր

Միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմում է բյուջետային գործընթացի բաղադրիչը: «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով սահմանված է ՄԺԾԾ կառուցվածքը և բովանդակությունը:

1. ՄԺԾԾ բաղկացած է երկու մասից՝

ա) կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունը շարադրող մաս,

բ) կառավարության ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող մաս:

Կառավարությունը և կենտրոնական բանկը ՄԺԾԾ-ում պարբերաբար համատեղ սահմանում են գնաճի կանխատեսվող մակարդակը:

2. Հարկաբյուջետային քաղաքականությունը շարադրող մասը պետք է պարունակի տեղեկություններ՝

ա) կառավարության երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքների, եկամուտների, ծախսերի, դեֆիցիտի (պակասուրդի) կամ հավելուրդի և պարտքի գծով կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշների և ժամկետանց պարտքերի վերաբերյալ,

բ) հարկաբյուջետային նպատակների իրագործման ուղղությամբ աշխատանքների ընթացքի գնահատականի և նախորդ միջնաժամկետ ծախսերի ծրագրում տեղ գտած հարկաբյուջետային ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ՝ նախորդ միջնաժամկետ ծախսերի ծրագրում տեղ գտած հարկաբյուջետային նպատակների և/կամ ցուցանիշների նկատմամբ շեղումների կամ փոփոխությունների բացատրությամբ,

գ) միջնաժամկետ ծախսերի ծրագրի երեք տարվա (առաջիկա բյուջետային տարվա և դրան հաջորդող երկու տարիների) կտրվածքով մակրոտնտեսական, գնաճի, եկամուտների և ծախսերի ուղղությամբ կանխատեսումների վերաբերյալ,

դ) կարևոր տնտեսական և այլ ենթադրությունների վերաբերյալ, որոնց հիման վրա պատրաստվել են կանխատեսումները,

ե) կառավարության ռազմավարական գերակայությունների վերաբերյալ՝ դրանց կարևորության հիմնավորմամբ,

զ) հիմնական հարկաբյուջետային ռիսկերի վերաբերյալ:

3. Ծախսային քաղաքականության ռազմավարությունը պարունակում է պետական բոլոր մարմինների համար հետևյալ տեղեկությունները՝

ա) այն արդյունքները, որոնց կառավարությունը ցանկանում է հասնել պետական մարմինների կողմից իրականացվելիք բյուջետային ծրագրերի շրջանակներում ծախսեր կատարելու միջոցով,

բ) ծախսային գործոնները, այդ թվում՝ ակնկալվող ժողովրդագրական, տնտեսական և սոցիալական միտումները, որոնք կանխատեսվող ժամանակաշրջանի ընթացքում կազդեն պետական մարմինների կողմից իրականացվելիք բյուջետային ծրագրերի շրջանակներում կատարվելիք ծախսերի վրա,

զ) կառավարության գերակայությունները կանխատեսվող ժամանակաշրջանում, այդ թվում՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծով նախատեսված,

դ) տվյալ ոլորտում արտաքին ֆինանսական աջակցության չափերը:

5.3. Ծրագրային բյուջետավորում

Ծրագրային բյուջետավորումն (ԾԲ) իրենից ներկայացնում է բյուջետավորման մի եղանակ, որի ժամանակ բյուջետային գործ- ընթացը (ռազմավարական որոշումները, պլանավորումը, կատար- բումը, հաշվետվողականությունը և վերլուծությունները, աուդիտը) հիմնվում է բյուջեի շրջանակում իրականացվող ծրագրերի վրա:

Ծրագրային ձևաչափով բյուջետավորման նպատակն է պետական ծախսերի արդյունավետության բարձրացումը, բյուջետային գործընթացում թափանցիկության ու հաշվետվողականության սկզբունքների ապահովումը:

Հայաստանում ծրագրային բյուջետավորման ներդրման աշխատանքներն իրականացվել են սկսած 2004թ.-ից՝ ձեռնարկելով ԾԲ տարրերի աստիճանական արմատավորման ուղղությամբ որոշակի քայլեր:

Ծրագրային բյուջետավորման բարեփոխումները կարելի է բաժանել 4 փուլերի՝

Առաջին փուլ - ԾԲ անցման նախապատրաստական աշխատանքներ և աստիճանական անցման պայմանների ստեղծում (2002-2012թթ)

Երկրորդ փուլ - ԾԲ ամբողջական անցման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում (2012-2017թթ)

2013թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով առաջին անգամ ամրագրվեց և պարտադիր դարձավ Հայաստանում «ծրագրային բյուջետավորման» իրականացումը, այդ ձևաչափով տեղեկատվության ներկայացումը ՀՀ Ազգային ժողով:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. հունիսի 23-ի N 311-Ա հրամանով հաստատվեցին Հայաստանի Հանրապետությունում բազրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման շրջանակներում մեթոդական ուղեցույցները:

Երրորդ փուլ - ԾԲ իմպերատիվ կիրարկում (2018-2019թթ.):

Ներկայումս իրականացվում է ԾԲ բարեփոխումների 4-րդ՝ ԾԲ համակարգի բարեկավման փուլը, որով 2020թ.-ից սկսած նախատեսվում է՝

- Արդյունքային ցուցանիշների շրջանակի զարգացում, ցուցանիշների կատարելագործում, համալրում և ամբողջականացում:
- Արդյունքների վերաբերյալ հաշվետվողականության համակարգի համապատասխանեցում ԾԲ մեթոդաբանության պահանջներին:
- Ծրագրերի գնահատման մեթոդաբանության մշակում և ներդրում:
- Ոլորտային ռազմավարական փաստաթղթերի ԾԲ պահանջներին համապատասխանեցում:

2019 թվականից պետական բյուջեն մշակվում և ՀՀ ԱԺ կողմից հաստատվում է ԾԲ ձևաչափով: ԾԲ ամբողջական ներդրմամբ պայմանավորված ՀՀ բյուջետային օրենսդրությունում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

- Ծրագրային դասակարգումը դիտարկվում է որպես բյուջետային հատկացումների սահմանման հիմնական դասակարգում,
- Բյուջեի մասին օրենքով բյուջետային ծախսերը հաստատվում են բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգմամբ,
- ԾԲ հավելվածները բյուջեի ուղերձից տեղափոխվում են բյուջեի մասին օրենք,
- Բյուջեի մասին օրենքի հավելվածներում ներկայացվում է ծրագրերի նպատակների վերաբերյալ տեղեկատվություն (Ծրագրի նկարագրության փոխարինում Ծրագրի նպատակով),
- Բյուջեի մասին օրենքում յուրաքանչյուր ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր միջոցառումների համար սահմանվում է բյուջետային հատկացումների մեկ գլխավոր կարգադրիչ (ԲԳԿ):

Ծրագրային բյուջետավորումը (ԾԲ), որպես արդյունքին ուղղված բյուջետավորման տարատեսակ, զգալի շեշտադրում է անում ոլորտային քաղաքականություն-բյուջե կամ այսպես կոչված վերևից ներքև կապի ուժեղացման վրա: Այդ առումով, ԾԲ համակարգը հիմնվում է լավ ձևակերպված բյուջետային ծրագրերի վրա, որոնք ուղղված են տարբեր ոլորտներում պետության սահմանած քաղաքականությունների ապահովմանը կամ իրականացմանը:

Ծրագրային կառուցվածքով բյուջեն տեղեկացնում է նպատակների և արդյունքների մասին՝ հնարավորություն տալով այդ տեղեկատվությունն օգտագործել բյուջետային միջոցների օգտագործման համապատասխանությունը երաշխավորելու և այդ ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, ինչպես նաև թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բարձրացնելու համար:

ԾԲ հիմնական նպատակը ծախսային առաջնահերթությունների բարելավումն է, ինչը նշանակում է, որ այլ հավասար պայմաններում սահմանափակ բյուջետային ռեսուրսները հատկացվում են այն ծրագրերին, որոնք ապահովում են առավել մեծ օգուտներ հանրության համար:

5.4. Բյուջետային ծրագրերը և դրանց ներկայացվող պահանջները

Ծրագրերը հանդիսանում են միևնույն նպատակին հասնելուն ուղղված պետության քաղաքականության իրագործման միջոցառումների (ծրագրի միջոցառումներ) տրամաբանական խմբավորումներ: Այսինքն, ծրագրերը և դրանց կազմում ներառված միջոցառումները պետք է շաղկապվեն պետության կոնկրետ նպատակների հետ:

ԾԲ համակարգը զգալի շեշտադրում է անում հատկապես քաղաքականություն-բյուջե, այսինքն վերևից-ներքև կապի ապահովման վրա, ուստի ԾԲ պայմաններում բյուջետային ծրագրերը բխում են պետության քաղաքականությունից և յուրատեսակ կապող օղակ են հանդիսանում քաղաքականության և բյուջետավորման համակարգի միջև:

ՀՀ օրենքներն ու պաշտոնապես ընդունված ռազմավարությունները հանդիսանում են այն հիմնական փաստաթղթերը, որոնք սահմանում են պետության քաղաքականությունը և ապահովում են անհրաժեշտ հիմքեր և տեղեկատվություն բյուջետային գործընթացում ոլորտային հիմնախնդիրների, նպատակների, վերջնական արդյունքների, պետության միջամտության հիմնական ռազմավարական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման համար:

Այդ առումով, բյուջետային ծրագրերը հանդիսանում են այն հիմնական բյուջետային գործիքները, որոնք ապահովում են վերոհիշյալ տեղեկատվության փոխանցումը բյուջետային համակարգ, ՀՀ օրենքների և ռազմավարությունների իրականացումը և համապատասխան նպատակների ձեռք բերումը:

1. Ծրագրերը սահմանելիս անհրաժեշտ է ուղորդվել հետևյալ սկզբունքներով՝

- Ծրագրերը պետք է հստակ կապվեն որևէ նպատակի կամ վերջնական արդյունքի հետ.

Օրինակ՝ «Ճանապարհային անվտանգության ապահովման ծրագրի» նպաստում է ճանապարհատրանսպորտային պատահարների և դրանց արդյունքում մարմնական վնասվածքների և մարդկային զոհերի նվազեցմանը:

- Միևնույն ծրագրում պետք է ներառվեն տվյալ նպատակին կամ վերջնական արդյունքին ուղղված բոլոր տիպի միջոցառումները: Այսինքն՝ միևնույն ծրագրում կարող են ներառվել ծառայություններ, տրանսֆերտներ, ինչպես նաև ցանկացած այլ տիպի միջոցառումներ:

Օրինակ՝ «Զբաղվածության ծրագրում» գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման ծառայության հետ մեկտեղ, միևնույն ծրագրում կարող է ներառվել նաև գործազրկության նպաստները, որը տրանսֆերտ է:

- Ծրագրերը պետք է ներառի տվյալ նպատակին կամ վերջնական արդյունքին ուղղված միայն մեկ կոնկրետ պետական մարմնի կողմից իրականացվող միջոցառումները: Այսինքն, ծրագրերը պետք է ունենա հստակ գերատեսչական պատկանելություն և չպետք է խմբավորի տվյալ նպատակին կամ վերջնական արդյունքին ուղղված այլ գերատեսչությունների միջոցառումները:

- Պետական մարմնի բոլոր միջոցառումները պետք է ընդգրկվեն որևէ ծրագրում, այսինքն՝ չպետք է լինեն այնպիսի միջոցառումներ, որոնք չեն ներառվել որևէ ծրագրում:

- Յուրաքանչյուր միջոցառում պետք է ներառվի միայն մեկ ծրագրում, այսինքն՝ միևնույն միջոցառումը չպետք է կրկնվի տարբեր ծրագրերում:

- Միևնույն ծրագրի շրջանակներում պետք է ներառվեն տվյալ նպատակին կամ վերջնական արդյունքին ուղղված բոլոր տիպի միջոցառումները, անկախ ծախսերի բնույթից (ընթացիկ, կապիտալ և այլն):

- Անհրաժեշտ է հնարավորինս խուսափել այն դեպքերից, երբ որևէ գերատեսչության գծով բոլոր ծախսերը ներառվում են մեկ ընդհանուր ծրագրի ներքո: Քանի որ ծրագրային բյուջետավորման պայմաններում ծախսային առաջնահերթությունների վերաբերյալ որոշումները հիմնականում կայացվում են բյուջետային ծրագրերի մակարդակում, նման խոշոր ծրագրերի առկայությունը կբարդացնի բյուջետային ռեսուրսների վերաբաշխումների վերաբերյալ որոշումների կայացումը կենտրոնական մակարդակում: Միաժամանակ, առանձին գերատեսչության գծով ծրագրերի ընդհանուր թվաքանակը չպետք է գերազանցի 8-ը:

Օրինակ, ավելի տրամաբանված է կրթության նախարարության գծով սահմանել առանձին ծրագրեր հանրակրթության, բարձրագույն կրթության կամ միջին մասնագիտական կրթության համար, քան թե դրանք խմբավորել մեկ խոշոր՝ կրթության ծրագիր ներքո:

- Անհրաժեշտ է հնարավորինս խուսափել ֆինանսական առումով չափից դուրս փոքր ծրագրերի ձևավորումից: Բյուջետային ծրագրերից յուրաքանչյուրի կառավարման համար պետական մարմնում պետք է սահմանվի հստակ պատասխանավորություն, ինչը ենթադրում է լրացուցիչ ծախսեր ծրագրի կառավարման և վարչարարության հետ կապված: Չափից դուրս փոքր ծրագրերի դեպքում այդ ծրագրերի կառավարման և վարչարարության հետ կապված ծախսերը կարող են զգալի մասնաբաժին կազմել ծրագրերի ընդհանուր ծախսերի մեջ և արդարացված չլինել ծրագրի ընդհանուր արդյունավետության առումով: Բյուջետային ծրագրերից յուրաքանչյուրի ընդհանուր ֆինանսական ծախսերը պետք է սահմանվեն խելամիտ մակարդակում: Այդ առումով, 100մլն. ՀՀ դրամից ցածր արժեքով ծրագրերի վերաբերյալ առաջարկություններին կից (բացառությամբ վարչական բնույթի ծրագրերի), պետական մարմինները ՀՀ ՖՆ պետք է ներկայացվեն նաև լացուցիչ հիմնավորումներ՝ նման փոքր ծրագրի ձևավորման նպատակահարմարության վերաբերյալ:

5.5. Օրագրի միջոցառումները

Օրագրի միջոցառումները ծրագրի շրջանակներում պետության քաղաքականության իրագործման նպատակով իրականացվող պետության միջամտություններն են, որոնք հատկապես ուղղված են տվյալ ծրագրի համար սահմանված նպատակի իրագործմանը:

Օրագրի շրջանակներում պետության քաղաքականության իրագործման նպատակով կարող են իրականացվել տարբեր բնույթի միջամտություններ՝ ծառայությունների մատուցում, ապրանքների կամ տրանսֆերտների տրամադրում և այլն, որոնք բոլորն էլ ուղղված են տվյալ ծրագրի համար սահմանված նպատակի իրագործմանը: Օրինակ, «Ճանապարհային անվտանգության ապահովման ծրագրի» շրջանակներում ճանապարհային ուստիկանության կողմից կարող են իրականացվել մի շարք միջոցառումներ՝ ներառյալ տրանսպորտային միջոցների պետական հաշվառումը, վարորդական իրավունքների տրամադրումը, ճանապարհային երթևեկության անվտանգության կազմակերպումը և այլն, որոնք ուղղված են ճանապարհատրանսպորտային պատահարների և դրանց արդյունքում մարմնական վնասվածքների և մարդկային զոհերի նվազեցմանը:

Բյուջետային հատկացումները և արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշները սահմանվում են անմիջականորեն ծրագրի միջոցառումների մակարդակում: Այդ առումով, բյուջետային ծրագրերի ներքո հաստատված միջոցառումներն են, որ գործնականում հանդիսանում են բյուջետային հատկացումների սահմանման, բյուջեի կատարման և հաշվետվողականության հիմքը:

Բյուջետային ծրագրերի շրջանակներում, կարող են իրականացվել իրենց բնույթով և սոցիալ-տնտեսական ազդեցությամբ տարբեր տիպի միջոցառումներ՝ ընթացիկ, կապիտալ, հանրային սեփականության կառավարման կամ ֆինանսական ակտիվների կառավարման միջոցառումներ:

Օրագրերի միջոցառումները սահմանելիս անհրաժեշտ է ուղղորդվել հետևյալ կարևոր սկզբունքներով՝

- Ծրագրի միջոցառումներն իրենց բնույթով պետք է լինեն համասեռ և համանման: Այսինքն, պետության կողմից իրականացվող տարբեր բնույթի միջամտությունները և ծախսերը (ծառայությունների մատուցում, տրանսֆերտների տրամադրում և այլն) չպետք է համախմբվեն մեկ ընդհանուր միջոցառման ներքո և պետք է ներկայացվեն որպես առանձին միջոցառումներ:
- Միևնույն միջոցառման մեջ ընդգրկված ծառայությունները կամ ոչ ֆինանսական ակտիվները պետք է ունենան համանման բնույթ, այսինքն տարբեր տեսակի ծառայությունները չպետք է միավորվեն միևնույն միջոցառման մեջ, եթե նույնիսկ նպաստում են միևնույն նպատակի իրագործմանը, մատուցվում են սպառողների նույն խմբին, տրամադրվում են միևնույն աշխարհագրական տարածքում կամ մատուցվում են պետական մարմնի միևնույն ստորաբաժանման կամ կազմակերպության կողմից:
- Ծրագրի միջոցառումները պետք է ուղղված լինեն արտաքին սպառողին:
- Ծրագրի միջոցառումները պետք է կապվեն ծրագրի նպատակների և վերջնական արդյունքների հետ և անմիջականորեն ուղղված լինեն դրանց ապահովմանը:
- Բոլոր բյուջետային ծրագրերի միջոցառումները միասին վերցրած, պետք է ընդգրկեն բյուջեից հատկացվելիք ողջ ֆինանսավորումը, այսինքն չպետք է լինեն այնպիսի բյուջետային ծախսեր, որոնք չեն ներառված որևէ ծրագրի միջոցառման մեջ:
- Ծրագրի միջոցառումները պետք է ներառեն կամ ընթացիկ կամ ոչ ֆինանսական ակտիվներին առնչվող կամ ֆինանսական ակտիվներին վերաբերող ծախսեր: Միևնույն միջոցառման մեջ միաժամանակ չպետք է ներառվեն ընթացիկ և ոչ ֆինանսական բնույթի (կապիտալ) ծախսեր:
- Առանձին վերցրած յուրաքանչյուր միջոցառում չպետք է համախմբի մեկից ավելի գերատեսչության կողմից իրականացվող միջամտություններ (մատուցվող ծառայություններ և այլն):
- Ծրագրի միջոցառումների կառուցվածքը և դասակարգումը պետք է լինի այնպիսին, որ դրանց պլանավորումը, կատարումը, վերահսկումը և հաշվետվությունը չլինեն չափից ավելի ծախսատար և ժամանակատար: Ծրագրի միջոցառումները սահմանելու և խմբավորելու հետ կապված ծախսերը չպետք է գերազանցեն այն օգուտները, որոնք ակնկալվում են արդյունքում ստացվող բարելավված տեղեկատվությունից:
- Ծրագրի միջոցառումները պետք է սահմանվեն այնպես, որ հնարավոր լինի որոշել և հստակ կերպով արտացոլել դրանց ֆինանսական արժեքը բյուջեի պլանավորման և կատարման փուլերում:
- Ծրագրի միջոցառումը պետք է լինի էական, այսինքն՝ միջոցառումը պետք է ազդեցակի ծախսերի խոշոր մակարդակում կամ պարունակի ներկայացման արժանի տեղեկատվություն:
- Միջոցառումները պետք է ձևակերպել այնպես, որ հնարավոր լինի առանձնացնել առանձին միջոցառումների գծով ծախսերը և ղեկավարման պատասխանատվությունները: Մասնավորապես անհրաժեշտ է, որ գոյություն ունենան առանձնացված ծախսային կենտրոններ (օրինակ՝ գերատեսչության աշխատակազմ կամ դրա առանձնացված ստորաբաժանումներ), հնարավոր լինի տարրորոշել ծախսերի վրա ազդող գործոնները և տեղեկատվական համակարգը կարողանա հիմքեր ապահովել ծախսերի վերագրման համար՝ առանց լրացուցիչ մեծ ծախսերի:

5.6. Արդյունքային ոչ ֆինանսական չափորոշիչները և դրանց ներկայացվող պահանջները

Նպատակներ կամ **վերջնական արդյունքներ** են համարվում այն արդյունքը, որին ցանկանում է հասնել կառավարությունը հանրության համար: Այն հաճախ ներկայացվում է որպես հասարակության/հանրության կյանքի պայմանների բարելավում կամ դրան նպաստող դրական փոփոխություն:

Արդյունքային ցուցանիշների սահմանումը ենթադրում է հստակ պատասխանատվություն և հաշվետվողականություն այդ արդյունքների ձեռքբերման համար՝ որն իր հերթին կարող է ապահովել ավելի սերտ կապ բյուջետային տեղեկատվության և ծրագրերի իրականացման համար պատասխանատու միավորների գործառնական պլանների միջև (ուղղակի արդյունքների առումով):

Ի վերջո արդյունքային ցուցանիշների առկայությունը բյուջետային փաստաթղթերում և դրանց կիրառությունը բյուջետային որոշումների կայացման նպատակով, ենթադրում է այդ ցուցանիշների և դրանց փաստացի կատարողականի վերաբերյալ ժամանակին, որակյալ և հուսալի տեղեկատվության առկայություն: Այդ առումով կարևորվում է ինչպես արդյունքային ցուցանիշների վերաբերյալ համակարգված հաշվետվողականության, այնպես էլ բյուջետային ծրագրերի արդյունքների պարբերական ուսումնասիրության և գնահատման համակարգերի առկայությունը:

Ծառայությունների գծով ոչ ֆինանսական ցուցանիշները (ուղղակի արդյունքները) ներկայացնում են մատուցվող ծառայությունների կամ տրամադրվող ապրանքների այն առանձնահատկությունները, որոնց միջոցով կարելի է գնահատել ծառայությունը կամ ապրանքը շահառուների տեսանկյունից:

Դրանք ներառում են տրամադրվող ծառայությունների կամ ապրանքների՝

- Քանակը և ծավալը (քանակի ցուցանիշներ)

Օրինակ՝ «Բնակարանի տրամադրում մանկատների 34 շրջանավարտի»

- Ծածկույթ (ընդհանուրի որ մասն է “ծածկվում” կամ բավարարվում ծառայության տրամադրվող ծավալների դեպքում), (այդ տիպի ցուցանիշները կարելի է դիտարկել որպես քանակի տարատեսակ),

Օրինակ՝ «Բնակարանի տրամադրում մանկատների շրջանավարտների x %-ին»

- Որակը (որակի ցուցանիշներ)

- գնահատում են մատուցվող ծառայության որակը շահառուի տեսանկյունից,
- ցույց են տալիս տրամադրվող ծառայության կամ ապրանքի համապատասխանությունը որոշակի ստանդարտի:

- Ժամկետները կամ պատեհաժամ լինելը (ժամկետի ցուցանիշներ), բնութագրում են, թե որքան արդյունավետ է ծառայությունը՝ շահառուների կարիքներին արագ և ժամանակին արձագանքելու իմաստով:

- Ուղղակի արդյունքի ցուցանիշները չափորոշում են պետական մարմնի կողմից մատուցվող կամ արտաքին շահառուների համար գնվող ծառայությունները/ապրանքները, մինչդեռ վերջնական արդյունքի ցուցանիշները չափորոշում են տնտեսական, ֆիզիկական, սոցիալական կամ մշակութային միջավայրի այն փոփոխությունները, որոնց փորձում է

ներագրել/նպաստել պետական մարմինը՝ ծառայությունները կամ ապրանքները տրամադրելու միջոցով:

- Ծառայությունների ուղղակի արդյունքները վերահսկելի են: Պետական մարմինը կամ կազմակերպությունը, որը տրամադրում է այդ ծառայությունները, կարող է վերահսկել դրանք և պատասխանատու է դրանց համար:

Վերջնական արդյունքները լիովին վերահսկելի չեն, քանի որ դրանց վրա, բացի տվյալ պետական մարմնի կամ կազմակերպության իրականացրած ծրագրերից և մատուցած ծառայություններից, ազդում են նաև բազմաթիվ այլ գործոններ:

5.7. Ծառայության որակը շահառուի տեսանկյունից գնահատող ցուցանիշները

Ծառայության որակը շահառուի տեսանկյունից գնահատող ցուցանիշները հիմնականում այն ցուցանիշներն են, որոնք գնահատվում են՝ հիմնվելով շահառուի կարծիքի վրա: Այն դեպքերում, երբ շահառուները քաղաքացիներն են, նման ցուցանիշների ստուգման և հաշվետվության համար անհրաժեշտ է կազմել և իրականացնել հարցումներ:

Օրինակ՝

- «Հարցմանը մասնակցած քաղաքացիների X%-ի տված միջին գնահատականը՝ մատուցվող հիվանդանոցային ծառայությունների որակը բնութագրող տարբեր կողմերի վերաբերյալ կլինի «բավարար» կամ ավելի բարձր»,
- Հարցումը կարելի է անցկացնել և ցուցանիշը կարելի է ձևակերպել նաև առանձին հիվանդանոցային ծառայությունների համար:

Որակի ցուցանիշների մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, թե արդյո՞ք ծառայության որակի տվյալ կողմը հետաքրքրում է այդ մասին տեղեկությունը ստացողին այնքան, որ արդարացի տեղեկատվության ձեռքբերման լրացուցիչ ծախսերը (եթե այդպիսիք պահանջվում են): Այլ կերպ ասած՝ արդյո՞ք նշված տեղեկատվությանը տիրապետելու առավելությունները գերազանցում են այն ստանալու և ստուգելու համար պահանջվող ծախսերին:

Ցուցանիշների սահմանումն ինքնին չի բարելավում արդյունքները: Այն կարող է կառավարության գործունեության բարելավման արդյունավետ գործիք դառնալ միայն այն դեպքում, եթե տեղեկությունը ստացող որոշում կայացնող անձինք օգտագործեն այն պետական մարմնի գործունեության կարևոր կողմերի գնահատման և դրա հիման վրա՝ որոշումների կայացման համար:

Օրինակ

- «Բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության որակի ստուգումների անցկացում համաձայն ստուգումների անցկացման ուղեցույցում սահմանված ընթացակարգերի և ժամկետների (%)»:

5.8. Ծառայության կամ ապրանքի որակի՝ որոշակի ստանդարտի համապատասխանության ցուցանիշը

Ծառայության կամ ապրանքի որակի՝ որոշակի ստանդարտի համապատասխանության ցուցանիշը կարող է օգտակար լինել ծառայության որակի գնահատման համար, եթե առկա են նախապես սահմանված և/կամ համաձայնեցված ստանդարտներ (հենանիշեր):

Օրինակ

• «Դասարանների միջին խտությունը»՝ որպես ուսուցման (օրինակ՝ հանրակրթության ոլորտում) ծառայության որակի գնահատման ցուցանիշ: Այս ցուցանիշի միջոցով կարելի է անուղղակիորեն գնահատել ուսուցման որակը, քանի որ դասարանների խտությունից, այսինքն՝ նրանից, թե ուսուցիչը դասի ժամանակ քանի աշակերտի հետ է աշխատում, կախված է այն, թե որքան արդյունավետ կլինի ուսուցումը՝ աշակերտների կողմից յուրացման իմաստով: Այս ցուցանիշը օգտակար կլինի այն դեպքում, եթե գոյություն ունի դասարանների օպտիմալ խտության համաձայնեցված ստանդարտ կամ չափանիշ: Համեմատության համար կարող են օգտագործվել նաև միջազգայնորեն ընդունված ստանդարտները, ինչպես նաև լավագույն փորձ ունեցող երկրների ցուցանիշների կիրառումը որպես հենանիշ (benchmark): Մասնավորապես, տվյալ դեպքում, կարող են օգտագործվել (և օգտագործվում են) ՏՀԶԿ երկրների ցուցանիշները: Կրթության ոլորտում եվրոպական համագործակցության շրջանակներում, կրթական ցուցանիշների համեմատությունը կարելի է կատարել նաև եվրոպական երկրների համապատասխան ցուցանիշների հետ:

Չնայած պարտադիր չէ, որ որակի ցուցանիշը մշակվի հրապարակված կամ որևէ պաշտոնական փաստաթղթում արտացոլված ստանդարտի համեմատ: Որակի ցուցանիշները կարող են ուղղված լինել տարվա կամ համապատասխան ժամանակահատվածի ընթացքում որոշակի փոփոխության իրականացմանը:

Օրինակ

• «Բոլոր գրադարանները մինչև 2020թ. վերջը կունենան սպասարկման ավտոմատացված համակարգ»:

5.9. Ժամկետի ցուցանիշներ

Ժամկետի ցուցանիշները Դրանք հաճախ դիտարկվում են որպես ծառայությունների մատուցման որակի կողմերից մեկը:

Օրինակ

• «Պեղումների և հետախուզական աշխատանքների հայտերի ուսումնասիրություն, համապատասխան որոշման կայացում և ծանուցում հայտը ստանալուց հետո x օրվա ընթացքում»:

Որոշ ծառայությունների համար, որպես ժամկետի ցուցանիշ կարող է հանդես գալ ծառայության տրամադրման ժամկետը:

Օրինակ

- «Աշխատաշուկայի վերլուծության զեկույցի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն մինչև 2020թ. մարտի 31-ը»:

Ծառայությունների մատուցման ժամկետների մասին տեղեկատվությունը միշտ չէ, որ օգտակար է ներառել պլանավորման և հաշվետվության արտաքին փաստաթղթերում: Մասնավորապես, քաղաքականության առաջարկների կամ իրավական ակտերի առումով, յուրաքանչյուր առաջարկի կամ իրավական ակտի ժամկետի մասին տեղեկատվությունը, թեև կարող է օգտակար լինել ներքին պլանավորման և կառավարման համար, ավելորդ կերպով կծանրաբեռնի բյուջետային և պլանավորման ու հաշվետվության արտաքին փաստաթղթերը: Պլանավորման և հաշվետվության արտաքին փաստաթղթերում նման ցուցանիշի ներառումը իմաստավոր կլինի այն դեպքում միայն, եթե տվյալ փաստաթղթի մշակումը առանձնահատուկ կարևորություն ունի ոլորտի կամ ընդհանուր կառավարության քաղաքականության մշակման կամ իրականացման համար, և այդ պատճառով արտաքին շահառուին (տվյալ դեպքում՝ նախարարին, այլ դեպքերում, հնարավոր է, նաև կառավարությանը և խորհրդարանին) հատկապես հետաքրքրում է տվյալ փաստաթղթի ներկայացման ժամկետը:

Միշտ չէ, որ անհրաժեշտ կամ նպատակահարմար է մշակել ծառայությունների մատուցման ժամկետի ցուցանիշներ: Ինչպես նշված է սույն ձևաթղթի հետագա բաժիններում, ցուցանիշներն ընտրելիս որոշումը պետք է հիմնվի դատողության վրա առ այն, թե ցուցանիշների որ համախմբի միջոցով կարելի է առավել համակողմանիորեն բնութագրել ծառայությունը:

5.10. Վերջնական արդյունքի (նպատակի) ցուցանիշներ

Վերջնական արդյունքի ցուցանիշների սահմանումը ինքնանպատակ չէ. այն օգնում է գնահատել կառավարության գործունեության հնարավոր ազդեցությունը այն նպատակների իրագործման վրա, որոնց հետամուտ է կառավարությունը՝ հանրության համար:

Վերջնական արդյունքի ցուցանիշները հնարավորություն են տալիս հետևելու, թե արդյոք իրագործվում է նպատակը և որքանով է այն իրագործվում: Նրանք չափորոշում են տնտեսական, ֆիզիկական, սոցիալական միջավայրի այն փոփոխությունները, որոնց ցանկանում է հասնել կառավարությունը հանրության համար:

Այս տեղեկատվությունը օգտակար է պլանավորման փուլում, երբ կառավարությունը պլանավորում է իր գործողությունները և որոշում, թե ինչպիսի միջամտությամբ, այդ թվում՝ ինչ ծառայությունների կամ ապրանքների միջոցով է ներագդելու ցանկալի նպատակի վրա:

Հետևաբար, բացի վերջնական արդյունքի սահմանումից, ինչը իրականացվում է պլանավորման ժամանակ, պետք է նաև հետևել նրա իրագործմանը հաշվետվության փուլում: Այդ առումով, բավական չէ սահմանել ընդհանուր բնույթի նպատակներ, որոնք հնարավոր չէ չափել, ինչպես, օրինակ, «բնակչության առողջական վիճակի բարելավում»: Կարևոր է, որ նպատակների սահմանումը ուղեկցվի հստակ և չափելի (այսինքն՝ կոնկրետ թվերով արտահայտված) ցուցանիշներով, որոնք հնարավոր կլինի ստուգել հաշվետվության փուլում:

Վերջնական արդյունքի ցուցանիշները հաճախ շփոթում են ուղղակի արդյունքի ցուցանիշների հետ: Ուղղակի արդյունքի ցուցանիշները չափորոշում են պետական մարմնի

կողմից մատուցվող կամ արտաքին շահառուների համար գնվող ծառայությունները/ապրանքները, մինչդեռ վերջնական արդյունքի ցուցանիշները չափորոշում են տնտեսական, ֆիզիկական, սոցիալական կամ մշակութային միջավայրի այն փոփոխությունները, որոնց փորձում է ներագդել/նպաստել պետական մարմինը՝ ծառայությունները կամ ապրանքները տրամադրելու միջոցով:

Ծառայությունների ուղղակի արդյունքները վերահսկելի են: Պետական մարմինը կամ կազմակերպությունը, որը տրամադրում է այդ ծառայությունները, կարող է վերահսկել դրանք և պատասխանատու է դրանց համար:

Վերջնական արդյունքները լիովին վերահսկելի չեն, քանի որ դրանց վրա, բացի տվյալ պետական մարմնի կամ կազմակերպության իրականացրած ծրագրերից և մատուցած ծառայություններից, ազդում են նաև բազմաթիվ այլ գործոններ: Բացի դրանից, հաճախ դժվար է միանշանակ որոշել, թե կոնկրետ ծրագիրը կամ միջոցառումը ինչպես է ազդել կամ նպաստել տվյալ նպատակի/վերջնական արդյունքի իրագործման վրա:

Վերը նշվածից հետևում է, որ թեև պետական մարմինը կամ կազմակերպությունը պլանավորում է վերջնական արդյունքի նպատակային ցուցանիշները, հետևում է դրանց իրագործմանը և հաշվի է առնում հաջորդող ժամանակաշրջանի պլանավորման փուլում, սակայն նա պատասխանատու չէ վերջնական արդյունքի իրագործման համար:

VI. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

6.1. Ֆինանսական վերահսկողության դերը բյուջետային գործընթացում և առկա հիմնախնդիրները

Անցումային տնտեսության պայմաններում, որպես կանոն, գերակայում են հանրային ֆինանսների կառավարման, սեփականության վերաբաժանման գործընթացները, որոնք արտացոլում են երկրում գույքային հարաբերությունները, սոցիալական տարբեր խմբերի շահերը և որոշում են տնտեսության հետագա զարգացման բնույթը:

Այդ գործում խիստ կարևորվում է բյուջետային գործընթացի ժամանակ հանրային ֆինանսների կառավարման փուլերից մեկի՝ **վերահսկողության գործառնություն**, իրականացման մակարդակը՝ որպես ռազմավարությամբ և բյուջետային ծրագրերով նախատեսված նպատակների իրացման և դրանց հասնելուն ուղղված կառավարչական որոշումների հսկման, ստուգման, վերլուծության և գնահատման միջոց:

Վերահսկողության իրականացման ցածր մակարդակը բացասաբար է անդրադառնում կառավարման ամբողջ համակարգի վրա: Այս առումով վերահսկողական միջոցառումները թույլ են տալիս ի հայտ բերել բյուջետային միջոցների ոչ արդյունավետ և ոչ նպատակային օգտագործման, օրենսդրության խախտումների հետևանքով բյուջեի եկամուտների կորստի, կոռուպցիոն ռիսկերի և օրենսդրության մեջ առկա բացերի օգտագործման փաստերը:

ՀՀ-ում 2018 թ. թավշյա, ոչ բռնի հեղափոխությունից հետո մշակված և իրականացվող տարբեր ռազմավարությունները ուղղված են պետական իշխանության ամրապնդմանը, դատա-իրավական բարեփոխումներին, կոռուպցիայի կանխարգելմանն ու վերացմանը,

իրավախախտումների դեմ պայքարի ուժեղացմանը, ինչը օրվա հրամայական է դարձնում նաև **Ֆինանսական վերահսկողության՝ որպես պետական կառավարման գործառույթի, ուժեղացումը:**

Երկրում ներկայում առկա են այդ գործառույթի իրականացման օրենսդրա-իրավական հիմքերը և գործող համակարգը: Սակայն իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆինանսական վերահսկողության կազմակերպումը ունի մի շարք թերություններ՝ կապված ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների արհեստավարժության ոչ բավարար մակարդակի, ռեսուրսային ապահովման խնդիրների, դրանցում առայժմ առկա կոռուպցիոն ռիսկերի հետ և այլն: **Դրանք ցայտուն կերպով դրսևորվում են ՀՀ ֆինանսական հարաբերությունների համակարգի առանձնահատուկ օղակի՝ ՀՀ պետական բյուջեի և հատկապես բյուջետային ծրագրերի (ուրոտային քաղաքականություններից բխող), ֆինանսական ու ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների կատարման նկատմամբ լիազոր մարմինների կողմից իրականացվող ոչ լիարժեք վերահսկողության գործընթացում:**

Ի լրումն վերոհիշյալի, որպես նշանակալի թերություն, հատկապես պետք է նշել ֆինանսական վերահսկողության իրականացման գործընթացներին **հասարակության, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ որպես հասարակական վերահսկողության իրականացման կարևոր գործիքի, չներգրավվածությունը և/կամ ներգրավվածության խիստ ցածր մակարդակը:**

Երկրի բնակչությունը, որպես երկրում առկա ռազմավարական փաստաթղթերի շրջանակներում մշակված բյուջետային ծրագրերի և դրանցով նախատեսված բազմաթիվ նպատակների հիմնական շահառու, իրականում չի զգում դրանց ներառականությունը, իսկ քաղաքացիական հասարակությունը բավարար տեղեկացված չէ դրանց արդյունքների մասին: Կարելի է նկատել հաշվետվողականության և հետադարձ կապի բավականին ցածր մակարդակ, ինչը կարող է առանցքային ազդեցություն ունենալ բյուջետային ծրագրերի միջոցով մատուցվող հանրային ծառայությունների ծավալի և որակի գնահատման վրա:

Մեկ այլ լուրջ խնդիր է **պետական ֆինանսների ֆինանսական և հանրային վերահսկողության թերությունները**, որոնք հղի են պետական միջոցների արդյունավետ և ներառական օգտագործման, թափոնների և կոռուպցիոն ռիսկերի վտանգներով: Դրանք ակնհայտորեն դրսևորվում են ՀՀ պետական բյուջեի, հատկապես բյուջետային ծրագրերի (ուրոտային քաղաքականությունից բխող), ֆինանսական և արդյունքների ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման նկատմամբ թերի վերահսկողության գործընթացում:

Որպես էական թերություն, հարկ է նշել **հասարակության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավվածության ծայրաստիճանի ցածր մակարդակը ֆինանսական վերահսկողության գործընթացներում՝** որպես հասարակական վերահսկողություն իրականացնելու հնարավոր և կարևոր գործիքի:

Նշված խնդիրները լուծելու համար բյուջետային ծրագրերի արդյունքների մոնիտորինգի համակարգի կատարելագործումը դառնում է գերակա՝ համակարգում ներգրավելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներուժը, որը համահունչ կլինի միջազգային սահմանված նպատակներին, գերակայություններին և պարտավորություններին, ինչպես նաև Կառավարության բազմաթիվ հավաստիացումներին՝ քաղաքացիական հասարակության հետ համագործակցության վերաբերյալ:

6.2. Ֆինանսական վերահսկողության տեսականները

Ֆինանսաիրավական գրականության մեջ ֆինանսական վերահսկողությունն ըստ սուբյեկտների դասակարգվում է հետևյալ կերպ՝

1. **համապետական ֆինանսական վերահսկողություն**, որն իրականացվում է պետական իշխանության և կառավարման բարձրագույն ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից,
2. **ներգերատեսչական ֆինանսական վերահսկողություն**, որը կապված է անմիջական կառավարման իրականացման հետ, ընդգրկում է ենթակա մարմինների ամբողջ գործունեությունն ընդհանրապես,
3. **արտագերատեսչական ֆինանսական վերահսկողություն**, որն ընդգրկում է ոչ ենթակա մարմինների ֆինանսական գործունեությունը,
4. **աուդիտորական ֆինանսական վերահսկողություն**
5. **ներտնտեսական ֆինանսական վերահսկողություն**,
6. **հասարակական ֆինանսական վերահսկողություն**:

Ֆինանսական վերահսկողությունն ըստ ժամանակային բնույթի դասակարգվում է հետևյալ կերպ՝

1. նախնական,
2. ընթացիկ,
3. հետագա վերահսկողություն:

Բյուջետային ծրագրերի վերահսկողության համար շատ կարևոր են վերոհիշյալ բոլոր ժամանակային վերահսկողության գործընթացները: Սակայն դրանց շարքում ՔՀԿ-ների կողմից վերահսկողության առումով կարևորվում է հետագա վերահսկողությունը, որի նպատակն է ամփոփել արդյունքները և ստուգել որոշումների կենսագործման ուղղությամբ կատարված աշխատանքը, նախատեսված նպատակների իրականացումը, արդյունքային ցուցանիշների կատարման մակարդակը:

Ֆինանսական վերահսկողությունը լինում է արտաքին և ներքին վերահսկողություն:

6.3. Ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինները

Համապետական ֆինանսական վերահսկողությունը ՀՀ-ում իրականացնում են՝

1. **ՀՀ Ազգային ժողովը**, որը հաստատում է պետական բյուջեները և այդ բյուջեների կատարման մասին տարեկան հաշվետվությունները,
2. **Հաշվեքննիչ պալատը**, որպես անկախ աուդիտորական բարձրագույն մարմին,
3. **տեղական ինքնակառավարման մարմինները**, որոնք հաստատում են համայնքային բյուջեները և այդ բյուջեների կատարման մասին տարեկան հաշվետվությունները,
4. **ՀՀ վարչապետին ենթական պետական վերահսկողական ծառայությունը**²³, որի նպատակն է ապահովել վարչապետին Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումը: Ծառայությունը պետական վերահսկողության շրջանակներում և «Պետական

²³ <https://www.supervision.am/mission/>

վերահսկողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝

- 1) պետական կառավարման համակարգի մարմիններում և պետական հիմնարկներում իրականացնում է ուսումնասիրություններ՝ պետական միջոցների կառավարման և ձևավորման արդյունավետության և օրինականության վերահսկողության նպատակներով,
- 2) Սահմանադրությամբ և օրենքներով ստեղծված, պետական կառավարման համակարգի մարմին չհանդիսացող մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների կառավարման օրինականության վերահսկողության նպատակով,
- 3) տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով,
- 4) պետական միջոցների ձևավորման գործառույթ իրականացնող լիազորված անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների ձևավորման օրինականության վերահսկողության նպատակով,
- 5) պետությունից, համայնքից, պետական, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից, պետության, համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կամ դրամաշնորհի կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության նպատակով,
- 6) Հայաստանի Հանրապետությունից սուբսիդիա և դրամաշնորհ ստացած անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոց տրամադրելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով,
- 7) և այլն:

Արտագերատեսչական համապետական ֆինանսական վերահսկողությունն իրականացվում է ոչ ենթակա մարմինների ֆինանսական գործունեությունը՝ հետևյալ համապետական մարմինների կողմից՝

1. **ՀՀ ֆինանսների նախարարությունն**²⁴՝ իր ենթակա բոլոր ստորաբաժանումների, և հատկապես **Ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության**, միջոցով իրականացնում է ՀՀ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համապատասխան բյուջեների կատարման վերահսկողություն,
2. **ՀՀ պետական եկամուտների կոմիտեն**²⁵՝ իր ենթակա բոլոր ստորաբաժանումների միջոցով իրականացնում է ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման վերահսկողություն,

²⁴ <https://minfin.am/hy/page/nakhararutyuny/>

²⁵ <https://www.petekamutner.am/>

